

Ռուզան Ալբերտի Մկրտչյանի «Սևանի ավազանի կենսահնագիտությունը (միջին և ուշ բրոնզի դարաշրջաններ)» «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության վերաբերյալ

### Կարծիք

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, պատմական գիտությունների թեկնածու  
Հակոբ Երվանդի Սիմոնյան

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 8 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից՝ ընդամենը 206 մեքենագիր էջ և հավելվածից՝ լուսանկարներից և աղյուսակներից՝ 96 էջ /207-303 էջ/:

Արդի հնագիտության զարգացումն այժմ անխզելիորեն կապված է ճշգրիտ և տեխնիկական գիտությունների մեթոդների կիրառման, առկա սկզբնաղբյուրների համալիր և համակողմանի ուսումնասիրությունների հետ: Դրանցում առաջնահերթ դերակատարում ունի հնամարդաբանությունը, որն այսօր բարձրացել է ուսումնասիրության մի ուրույն մակարդակի:

Կարդալով Ռուզան Մկրտչյանի ատենախոսության թեզը՝ մտովի տեղափոխվում եմ 20-րդ դարի վերջին քառորդը, Երևանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտությունների լաբորատորիայի կազմում գործող հնագիտական հետազոտությունների խմբի ջերմ ու անմիջական միջավայրը: Մի խումբ երիտասարդներ անսահման նվիրվածությամբ հետազոտում էին հայ մշակույթի հնագիտական շերտերը: Խմբի ղեկավար Գրիգոր Արեշյանի լայնախոհ մոտեցման շնորհիվ խնդիր էր դրվել համակողմանի ուսումնասիրել Հայաստանի հնագիտությունը: Այդ նպատակով առաջնային էր դարձել հնագիտության ոլորտում պատրաստել գիտնականներ այն ժամանակ մեզ համար հասանելի ամենահեղինակավոր կենտրոններում՝ համաշխարհային հռչակ վայելող գիտնականների ղեկավարությամբ: Նրա ջանքերով ԽՍՀՄ ԳԱ Մոսկվայի և Լենինգրադի կենտրոններում ասպիրանտուրայի հաստիքներ բացվեցին, որտեղ ընդունվեցին մի շարք երիտասարդ մասնագետներ: Այսպես, Պետական Էրմիտաժի տնօրեն, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Բորիս Բորիսովիչ Պիոտրովսկին ղեկավորում էր Սիմոն Գևորգի Հմայակյանի, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, այնուհետև ակադեմիկոս, Վալերի Պավլովիչ Ալեկսենը՝ ԽՍՀՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտ՝ Ռուզան Ալբերտի Մկրտչյանի, Թուրքմ. ԽՍՀ ակադեմիայի թղթակից անդամ Վադիմ Սիխաիովիչ Մասունը՝ ԽՍՀՄ հնագիտության ինստիտուտի Լենինգրադի մասնաճյուղ՝ Հակոբ Երվանդի Սիմոնյանի, խեցեղենի տեխնոլոգիայի առաջատար մասնագետ Է. Վ. Սայկոն՝ Քնարիկ Հովհաննեսի Նավասարդյանի աշխատանքը և այլն:

Անցնելով ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի մարդաբանության փայլուն դպրոցը՝ Ռուզան Մկրտչյանը դարձավ գրեթե մեր բոլոր հնագիտական արշավախմբերի անփոխարինելի մասնակիցը: Հիշում եմ, թե ինչքան կարևոր էին թաղման ծեսի, կմախքների դիրքի և սեռա-տարիքային առաձնահատկությունների բացահայտումները, որոնք կատարվում էին տեղում, բնապայման դիտարկումների արդյունքում: Ռուզան Մկրտչյանն այնուհետ զարգացրեց իր մասնագիտական կարողությունները՝ շփվելով Եվրոպական առաջվոր գիտական կենտրոնների հետ, իր ուսումնասիրություններն այնուհետև խարսխելով Արևմուտքի առաջավոր մեթոդների կիրառման և վերլուծության սկզբունքների հետ: Ահա այս սինթեզի՝ ԽՍՀՄ և արևմտյան դպրոցների համադրության արդյունք է ներկայացված ատենախոսությունը:

Ուսումնասիրության թեման առավել քան արդիական է և հրատապ, քանզի հիմնականում արժարժում է Հայաստանի հնագիտության կարևորագույն տարածաշրջաններից մեկի՝ Սևանի ավազանի մարդաբանական մեզ հայտնի նյութը, այն քննարկելով ինչպես դասական մարդաբանության, այնպես էլ կենսահնագիտության՝ ատամների ախտորոշումների համատեքստում:

Ատենախոսության մեջ արժարժվող մի շարք հնամարդաբանական համալիրներ գիտական շրջանառության մեջ են դրվել Ռուզան Մկրտչյանի անխոնջ ուսումնասիրությունների և հրատարակությունների շնորհիվ: Կան հնամարդաբանական համալիրներ, ինչպես օրինակ Դարի գուխ դամբարանադաշտի հավաքածուն, որոնք առաջին անգամ ներկայացվել են ատենախոսության տեքստում: Սա ատենախոսի կարևոր ներդրումներից է գիտության ոլորտում:

Հնամարդաբանական համալիր ուսումնասիրությունների շնորհիվ, որն իրականացրել է Ռուզան Մկրտչյանը, հնագիտական սկզբնաղբյուները ձեռք են բերել պատմական սկզբնաղբյուների կարգավիճակ՝ հիմք հանդիսանալով պատմամշակութային վերակազմությունների համար: Ատենախոսը բավականին ուշագրավ էքսկուրս է կատարել Սևանի ավազանի և Ծիրակի սննդակարգերի բացահայտման համար: Ծիրակում միջին և ուշ բրոնզի դարերում լայնորեն տարածված կարիես և արսցեզ ատամնաախտաբանական դիտարկումները նա մեկնաբանել է որպես հետևանք սննդակարգում հացազգիների լայն կիրառման: Հացաբույսերի հավաքական անվանման՝ աշորա, հիմքում ատենախոսը դիտարկել է հայոց հնագույն աստվածություններից կամ նահապետներից մեկի՝ Ծարայի անվան արտացոլումը, որը տեղ է գտել նաև հարևան տարածաշրջաններում /Էջ 168-169/: Այս դիտարկումն ունի կարևոր նշանակություն ֆիզիկակլիմայական տարբեր միջավայրերում ապրող մարդկանց կենսամիջոցների և բիոմասսայի ծավալների բացահայտման ու կիրառման գործընթացում:

Ուշագրավ է Սևանի ավազանի և Շիրակի՝ Արթիկի դամբարանադաշտի ատամնաախտաբանության համեմատությունը, որը հիմնականում պայմանավորված է կարիես և արքցեզ հիվանդությունների աղբյուր հանդիսացող հացազգիների կիրառմամբ, որն ակնհայտ ավելի բարձր է Շիրակում: Ուշագրավ է կարիեսի և արքցեզի մոտ երեք անգամ գերակայությունը արական անհատների մոտ /էջ 158, 167-168/: Այս երևույթն ատենախոսը մեկնաբանում է որպես տվյալ սննդամթերքի նկատմամբ արական անհատների նախասիրությամբ: Կարծում ենք, որ այս դեպքում անհարժեշտ է նշված հիվանդությունները քննարկել տարբեր տարիքային խմբերի համատեքստում, քանզի, ըստ ատենախոսի դիտարկումների՝ տղամարդկանց կյանքի միջին տևողությունը զազալիորեն գերակայել է կանանց կյանքի միջին տևողությանը: Որոշակի է, որ ատամների ախտաբանությունն ավելի տարածված է եղել երկարակյաց մարդկանց մոտ, հետևաբար ատամների ախտաբանության տարբեր ցուցիչները կարող են պայմանավորված լինել նաև տարիքային առանձնահատկություններով:

Առանձնապես կարևորում են նրա այն դիտարկումը, որ Սևանի ավազանում ձևավորված լճաշենյան հզոր միության էթնիկ կազմը որոշակի փոփոխությունների է ենթարկվել էքզոգամ՝ արտամուսնական հարաբերությունների արդյունքում, երբ Լճաշենյան մշակույթի հաղթական ռազմիկները կին էին բերում դրսից: Այս երևույթն այնքան տարածված է եղել, որ իր ազդեցությունն է ունեցել Սևանի ավազանի ազգաբնակչության մարդաբանական կազմի վրա: Նշված դիտարկումն ունի բացառիկ նշանակություն հնագույն պատմական երևույթների բացահայտման համար: Կանանց ատամնաքարերի քիմիական կազմի հետագա ուսումնասիրությունները կարող են ի հայտ բերել տարածաշրջաններին հատուկ բուսական և կենդանական սննդակազմը, որն էլ իր հերթին կարող է բացահայտել լճաշենյան մշակույթի ցեղային միությունների՝ ձևավորված առաջնորդ-արքաների ինստիտուտի պայմաններում նրանց ձեռնարկած հեռագնա արշավանքների մասին, բացահայտելով այդ արշավանքների երթուղիներն ու տարածքները:

#### ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարևորելով տարբեր տարածաշրջանների կենսահնագիտական տվյալների համեմատության անհրաժեշտությունը, հարկ ենք համարում նշել, որ յամնայա և կատակոմբային մշակույթները ժամանակակից չեն Հայաստանի միջին և ուշ բրոնզի դարերի մշակույթներին /էջ 5 և էջ 159/: Սրանց միջև առկա է ավելի քան 1-1,5 հազարամյա խզում: Հետևաբար սրանք չեն կարող դիտարկվել որպես համաժամանակյա երևույթներ: Ավելին, տարբեր լանդշաֆտային և էթնո-մշակութային միջավայրերում, տարբեր սոցիալ-տնտեսական իրավիճակներում ապրող համայնքների և էթնիկ պոպուլյացիաների միջև եղած կենսահնագիտական տարբերություններն անսպասելի չեն: Ավելին, դրանք պետք է

դիտարկել որպես օրինաչափություն: Հարավուսական տափաստանների յամնայա և կատակոմբային մշակույթների հնամարդաբանությունն ավելի տրամաբանական կլիներ համեմատել Հայաստանի խալկոլիթյան և վաղ բրոնզի դար 1-ի կենսահնագիտական իրողությունների հետ, որն ատենախոսը կարող է իրականացնել հետագա ուսումնասիրությունների ժամանակ:

Էջ 149. 1986 թ. յույս տեսած աշխատությունը չէր կարող պատկանել «անցած դարի 90-ական թթ.-ին», քանզի 90-ական թվականներն ընդգրկում են 1990-1999 թթ.: Եվս մի փոքր դիտարկում, 1986-ին ոչ Վալերիյ Պավլովիչ Ալեկսեևը, ոչ էլ Տատյանա Իվանովնա Ալեկսեևան դեռևս ակադեմիկոսներ չէին:

Էջ 150. Հիվանդություններն անմիջականորեն չեն առնչվում սոցիալական կարգավիճակի հետ, քանզի սոցիալական կարգավիճակն անմիջականորեն առնչվում է հասարակության կառուցվածքի հետ, իսկ հիվանդությունների թիրախում հայտնվում են ցանկացած կարգավիճակի մարդիկ, իննեն դրանք վերնախավի, զինվորական դասի, արհեստավորական կամ երկրագործական խավերի ներկայացուցիչներ:

Անհասկանալի է միջին և ուշ բրոնզի դարերի արտադրող հասարակարգերի համար Քենոնի այն մտքի ներկայացումը, որ յուրացնող տնտեսության ակտիվացումը բացասական հետևանք է ունեցել մարդու առողջության վրա /էջ 167/: Նեոլիթյան հեղափոխությունից ի վեր մարդկությունն արդեն վաղուց յուրացնող տնտեսաձևից անցում էր կատարել արտադրող տնտեսաձևին:

Նույն սկզբունքով անհարկի ենք համարում Գեյի այն տեսակետի ներկայացումը /էջ 112-113/, որ դամբարանադաշտի կամ դրա մի հատվածի պեղումներից հայտնաբերված կմախքների, տվյալ դեպքում հանգուցյալների, սեռատարիքային տվյալների հանրագումարը համամասնորեն արտացոլում է տարվա ընթացքում մահացած տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչների տոկոսային հարաբերությունը /Դեյ 1990, с. 79/: Արդի գիտությունն ի գործու չէ բացահայտելու դամբարանադաշտում, կամ դրա մի հատվածում նույն տարում թաղվածներին: Այսպիսի դիտարկում կարելի է անել միայն մեկ դամբարանի դեպքում, որում միաժամանակյա ակտով կատարվել են տարբեր անհատների համաժամանակյա թաղումներ: Նույնիսկ մեր կողմից առաջ քաշված երկնային յուսատուի միջոցով դամբարանների կողմնորոշման միջոցով մահացածների թաղման ժամանակը 1-3 օր ճշտությամբ որոշելը կարող է ի հայտ բերել միայն օրերի և ամիսների ժամանակը, այլ ոչ թե տարին:

Վիճահարույց է այն պնդումը, որ պատմամշակութային գործընթացների ուսումնասիրության համատեքստում հնամարդաբանական տվյալների համակարգված վերլուծությունը հին հասարակությունների ժողովրդագրական համապատկերի վերակազմության համար ամենակարևոր և միակ սկզբնաղբյուրն է /էջ 112/: Այն անկասկած

չափազանց կարևոր է, սակայն ժողովրդագրական վերակազմությունների համար ոչ պակաս արժեքավոր են նաև լեզուն, տեղանունները, պատկերագրությունը և այլն:

Ատենախոսությունում առկա են մտքի կրկնություններ և օտարալեզու տերմինների կիրառումներ:

Ցանկալի կլիներ աղյուսակների հավելվածը համալրել գիտոգրամաներով, որոնք ավելի ակնառու կդարձնեն կատարված մեծ աշխատանքը:

Ընդհանրացնելով, կարող ենք նշել, որ մեր առաջարկություններն ու դիտարկումները դույզն-ինչ չեն ստվերում Ռուզան Մկրտչյանի կատարած աշխատանքի բարձր որակը: Դրանք ավելի շատ խորհրդատվական բնույթ ունեն և միտված են նրա ուշադրությունը բևեռել հետազայում, ատենախոսության հիմքի վրա գրքի հրատարակության ժամանակ նշված դիտողությունները հաշվի առնելու համար:

Ռուզան Մկրտչյանի ներկայացրած ատենախոսությունը երկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունք է: Այն համակողմանի գիտական պրպտումների, հնագիտական և մարդաբանական տվյալների սինթեզի արդյունքում ստեղծված կոթողային աշխատանք է, որը լիովին համապատասխանում է գիտության դոկտորի գիտական աստիճանի համար ներկայացվող պահանջներին:

Նկատի ունենալով ներկայացված աշխատանքի բարձր որակը, որպես պաշտոնական ընդդիմախոս, միջնորդում եմ հարգարժան մասնագիտական հանձնաժողովին Ռուզան Մկրտչյանին շնորհելու իր հայցած դոկտորի գիտական աստիճանը:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
պատմական գիտությունների թեկնածու,  
մշակույթի վաստակավոր գործիչ՝  
Հակոբ Միմոնյան



Հաստատում եմ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի գիտական քարտուղար՝

Թագուիի Ռուբիկի Ավետիսյան

